ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1951 Общественные науки

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԱՌԵՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ջավախիշվիլու անվան Պատմության ինստիտուտը այս տարի պեղումներ կատարեց Վրաստանի հինավուրց մայրաքաղաք Մծխեթայի շրջակայքում։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նյութական կուլտուրայի արժեքավոր մնացորդներ։ 1951 թվականի հուլիս ամսին Մծխեթայի կայարանից մոտ 300 մետր հեռավորության վրա, Կուր գետի աջ ափին բարձրացող ժայռոտ լեռան ստորոտում հայտնաբերվեց մի ուշագրավ դամբարան, որտեղ թաղված է եղել անտիկ շրջանի Քարթլիի իշխանազուններից մեկը։

Դամբարանը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում որպես այդ բնույթի կառուցումների մեջ միանգամայն պահպանված միակ նմուշը։ Այդ դամբարանի կառուցվածքի ճարտարապետությունը նույնն է, ինչ որ բնակելի կամ պաշտամունքային շինությունների ճարտարապետությունը։

Պեղումներից պարզվեց, որ չնայած դամբարանը ժամանակի ընթացքում թալանվել է, բայց այնուամենայնիվ այնտեղ պահպանվել են թաղման հետ կապված բազմատեսակ նյութեր։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես դամբարանում գտնված 63 կտոր դրամները։ Արծաթե դրամների մեծ մասը վերաբերում են մեր թվականությունից առաջ՝ առաջին դարին։ Ոսկե դրամներից հնագույնը վերաբերվում է 80 թվականին՝ մեր թվականությունից առաջ։

Դամբարանում գտնված են մեծ քանակությամբ ապակյա ամաններ։ Ուշագրավ են այն ֆրագմենտները, որոնք հիշեցնում են Արմազիսխևիում և Բազինեթում հայտնաբերված թաղումնային մահճերի ոտքերի երկաթյա շրջաշարերը։ Հայտնաբերված են նաև բրոնզյա շատ յուրահատուկ կողպեքների մասեր, որոնք առաջին անգամն է, որ հանդիպում են Վրաստանում։ Ուշագրավ նյութերից է նաև բրոնզյա մի սնամեջ բանդակ, որը ներկայացնում է երգող պատանու մարմնի վերին մասը։ Այդ բանդակը բարձր արվեստի մի նմուշ է։

Դամբարանում թաղված մարդու կմախքը այն աստիճան է քայքայված, որ դժվար է ստույգ որոշել նրա սեռը, սակայն նկատի ունենալով դամբարանում պահպանված կահույքը, կարելի է եզրակացնել, որ նա եղել է բարձր դասի մի կին։ Դրանով էլ պետք է բացատրել, որ հայտնաբերված իրերը շատ նման են Արմազիսխևիի և Բազինեթի պեղումների ժամանակ կանացի դամբարաններում հայտնաբերված իրեղեններին։

Դամբարանի շրջապարիսպի հյուսիս-արևելյան անկյունում հայտնաբերված է ձիու կմախք, որը թաղված է դամբարանի մեջ գտնվող մարդու հետ միաժամանակ։ Պետք է ենթադրել, որ դա հանգուցյալին զոհաբերված մի նժույգ է, որը կոչված էր ուղեկցելու նրան «հանդերձյալ» կյանքում։ Դամբարանի ներսում գտնված են նաև խոշոր կենդանիների մի քանի ոսկորներ, որոնք ըստ երևույթին գերեզմանում դրված սննդի մնացորդներ են։

Դամբարանային այս կառուցումները ամենևին չեն հիշեցնում հռոմեական ճարտարապետություն և համարվում են հելլենիստական արվեստի նմուշներ։ Հայտնաբերված դամբարան-հուշարձանը որոշակիորեն ապացուցում է Վրաստանի կենդանի կապը հելլենիստական արվեստի հետ։

Այս և մի շարք այլ նյութեր, ավելի որոշակի ցույց են տալիս վրացական կուլտուրայի պատկերը մեր թվականությունից առաջ՝ 1-ին դարից մինչև մեր թվականության սկիզբը։ Դրանք միաժամանակ արտացոլում են նախաքրիստոնեական Վրաստանի կապը հելլենիստական առաջավոր Ասիայի հետ և հիմնավորում են այն փաստը, որ հելլենիստական շրջանի գործիչ Փառնավազ թագավորի կողմից է ստեղծվել վրացական այբուբենը։

* * *

Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ջավախիշվիլու անվան Պատմության ինստիտուտի և Աբխազիայի լեզվի, գրականության և պատմության ինստիտուտի միացյալ ուժերով անց է կացված Սուխումյան սարի հնագիտական ուսումնասիրություն։ Կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են արժեքավոր հնագիտական նյութեր, որոնք լուսաբանում են Սուխումիի անցյալը՝ մեր թվականությունից ավելի քան մեկ հազարամյակ առաջ։ Պարզվել է, որ այդ վայրում խոր անցյալում եղել է բավականին խոշոր բնակավայր, որն ունեցել է բազմադարյան պատմություն՝ սկսած ուշ բրոնզյա շրջանից մինչև հին և նոր ժամանակաշրջանները։ Այստեղ գոյություն է ունեցել ուշ բրոնզի մետաղի արդյունաբերություն։

Հայտնաբերված նյութերի շարքում կան տարբեր գույնի, տարբեր թրծվածքի, զարդարանքի կավե անոթների բազմաթիվ մնացորդներ։ Պղնձահալ հնոցի մնացորդները, պղնձի կամ բրոնզի ձուլվածքները, ինչպես և 15 հատ այսպես կոչված կոլխական կացինները, երկու դուր և ոզոր մշակելու համար օգտագործված բրիչանման մի գործիք՝ վկայում են, որ անցյալում այնտեղ զարգացած է եղել մետաղագործությունը։

Հայտնաբերված այս նյութերը հաստատում են այն դրությունը, որ կոլխերը և արևելյան միջերկրածովյան տարածություններում բնակվող նրանց ազգակից հին վրացական ցեղերը մետաղագործության մեջ եղել են հմուտ վարպետներ, և որ մետաղագործությունը այստեղ ծագում է առել ինքնուրույն։

Հին գերեզմանատների պեղումների ժամանակ ուշադրություն է գրավել դիակների թաղման տարբեր ձևը։ Դիակը անմիջապես հողում թաղելու (ինգումացիա) կողքին՝ հանդիպում է և դիակի այրում (կրեմացիա)։ Այդ փաստը մի ավելորդ անգամ էլ վկայում է, որ դիակի այրման սովորությունը կոլխերը ոչ թե հելլեններից են փոխ առել, այլ այն տարածված է եղել Վրաստանում՝ նախքան մեր ծովի ափերին հունական գաղութների հիմնումը։

Սուխումյան սարի հնագիտական կոմպլեքսի ուշադիր ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ անվիճելի եզրակացությանը, որ կոլխյան կուլտուրան այնքան էր ինքնուրույն ու հաստատուն, որ մեր թվականությունից առաջ 5—2-րդ դարերում այդ վայրերում բնակություն հաստատող հույները չափազանց աննշան ազդեցություն են ունեցել տեղական կուլտուրայի վրա։ Մյուս կողմից պարզվում է, որ Արևմտյան Վրաստանի տերիտորիայի վրա բնակվող էթնիկապես իրար շատ մոտիկ ցեղերի միջև եղել է կուլտուրական միասնություն, սկսած ուշ բրոնզյա շրջանից, մինչև առաջին հազարամյակը՝ մեր թվականությունից առաջ։ Եվ վերջապես Սուխումյան սարի վրա հայտնաբերված նյութերը իրավունք են տալիս սովետական գիտնականներին՝ Սուխումիի պատմության սկիզբը հետ տանել մեր թվականությունից առաջ, առնվազն մեկ հազարամյակ։

Է. Կ.

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կարևոր բաժիններից մեկն է Պետական Ձեռագրական ֆոնդը, որը տարեց-տարի հարստանում է ու ճոխանում։ Սովետական իշխանությունից առաջ Ադրբեջանում առհասարակ չի եղել ձեռագրական կենտրոնացված ֆոնդ։ Ադրբեջանական ժողովրդի դարերի ընթացքում ստեղծած կուլտուրական արժեքները ցրիվ ու ցրիվ վիճակում գտնվել են տարբեր դպրոցների փոքր գրադարաններում և անհատ մարդկանց մոտ։

Միայն Սովետական Իշխանության հաստատումից հետո, շնորհիվ անցյալի կուլտուրական արժեքների նկատմամբ Սովետական Իշխանության ցուցաբերած հոգատարության, քաղաքներից ու գյուղերից աստիճանաբար հավաքվեցին ձեռագրերը, որոնք այժմ կենտրոնացված են Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կից Ձեռագրական ֆոնդում։ Այդ ֆոնդում պահվող ձեռագրերի թիվը արդեն անցնում է 2000-ից։ Դրանք՝ սկսած 12—13-րդ դարերից մինչև 19-րդ դարը գրված ձեռագրեր են, մեծ մասամբ ադրբեջաներեն ու պարսկերեն լեզվով։ Կան նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների լեզուներով գրված ձեռագրեր։

Ձեռագրական ֆոնդում պահպանվում են տարբեր բնագավառների բազմաթիվ աշխատություններ։ Կան պատմության, գրականության, բժշկականության, ժողովրդական ստեղծագործության վերաբերող բազմաթիվ ձեռագրեր, ինչպես նաև կրոնական երկեր։ Հնագույն շրջանի արժեքավոր ձեռագրերից է 1307 թվականին գրված մի բժշկարան պարսկերեն լեզվով, անհայտ հեղինակի գործ։